



Ղևոնդ Ավիշան

Յուշիկք հայրենեաց Հայոց

Ս . Սահակ Պարթև

Ա

ԿԷՍ դարէ աւելի էր որ Հայաստան յերկու վիճակ բաժնուած՝ երկու ինքնակալ տէրութեանց վերատեսչութեան տակ, Պարսից եւ Յունաց, անոնց երկար եւ աշխարհախոռով կռիւները գրեթէ բոլորովին դադրեցուցեր էր: Բայց Յագկերտ Բ՝ հագիւ թագաւորած Պարսից, յամի 439, անպատճառ պատերազմ հրատարակեց ընդդէմ կայսերաց . հրաման տուաւ իր յառաջապահ սահմանակալ գունդերուն, որ մէկն Ասորեստանէն երթայ Մծբնայ վրայ, մէկ այլն յԱտրպատականէն մտնէ ի Հայաստան, Յունաց հայկական բաժինը խլելու: Այս գունդս՝ Երասխայ հովիտը եւ Վանայ պարատափը անջրպետող միջոցէն փութալով՝ կ'ելնէ . Ծաղկոտան վայելչութիւնները կոխկոտելով կու փճացնէ, տօնահանդէս Բագրեւանդայ բարձրատափին վրայ կու բանակի . եւ առանց ակնածութեան եւ գթոյ՝ կու գայ նոյն իսկ անոր շինագլուխ տօնագլուխ տեղոյն՝ Բագաւանին քով՝ իր գօրապետաց վրանները կու գարնէ: Ո՛րքան այլափոխուած էր Բագաւան այն առջի գուարթածաղիկ պայծառութենէն, զոր երբեմն տեսար, Հայկակ . եւ սակայն շատ ատեն չէր անցած այս երկու կերպարանաց մէջ . հագիւ տասն տարի էր՝ որ Այրարատայ թագաւորին բանակն չէր կանգներ ի Շահապիվան, եւ ոչ իրողօշներն ու վաշտերն կոուէին ի Բագաւան: Բագաւան թէ եւ դեռ իր հեթանոսական անունը պահէր, բայց գրեթէ դար ու կէս առաջ Լուսաւորչի աշով օծուած էր, Տրդատայ եւ իր աշխարհախումբ բանակին հոն մկրտուած ատեն . եւ Տարօնոյ դիցաւանին հետ՝ նուիրեալ էր Ս . Յովհաննու Մկրտչի . որոյ անունը

առնելով իր սրբեալ ճակատուն վրայ թագաւորն Տրդատ, իր յիշատակն այլ խառնեց Մկրտիչին հետ . անոր համար շատոնք կարծեն թէ յանուն Յովհաննոս – Տրդատայ թագաւորի՝ Ս . Յովհաննէս կոչուի մինչեւ ցայժմ Բագրեւանդայ Իւջ գիլիսէ անուանեալ տաճարն եւ վանքն . եւ ի միացեալ յիշատակ Տրդատայ, Լուսաւորչի եւ Յովհաննոս Մկրտչի՝ Հայոց ամենէն սրբազան ուխտատեղեաց մէկն է եղած, եւ հիմա մեր աշխարհքին սրբազան տաճարաց ամենէն վսեմագոյնն է ահեղակերպ մեծութեամբն եւ հնութեամբն . գեղեցիկ ծնունդ ճարտարապետութեան մեր Իսրայէլ վարդապետին եւ առատաձեռնութեան Հերակլի կայսեր . որոյ շինութեանն աւարտը եւ նաւակաւորը Հայադիրն նշանակէ ի 28 նաւասարդի (որ է 7 սեպտեմբերի) 639 ամին: Այսօրուան քեզի յիշելիքս այլ, Հայկակ, գարմանադէպ գուգութեամբ՝ նոյն օրաթուին նշանած է եւ նոյն դարաթուին, այսինքն յեօթն սեպտեմբերի յամին 439, ճիշդ 200 տարի առաջ: Այս ատեն Բագաւանի Ս . Յովհաննէս կայսերակոտ կերպարանքը չունէր, սակայն անշուք շինուած մ'այլ չէր, Գրիգորի եւ Տրդատայ դաստակերտ ըլլալով . վասն այսորիկ ոչ միայն պաշտօնասէր ժողովուրդք, այլ եւ ժողովրդապետք եւ հայրապետք գային պատուելու գտեղին յիշատակաց:

Եւ ահա հիմն՝ այլ Յագկերտի վարագացեալ գօրաց արշաւանաց ատեն, հոն Բագաւանայ խաղաղաւէտ խորաններու քով քաշուած կու նստէր, եւ երկայն գիշերուան լուսապահող լապտերի մը պէս՝ որ դանդաղ առաւօտուն մօտ պսպղալով կու մարմրի, այնպէս կու հսկէր մօտ ի գերեզման իննսնամեայ ծերունի մը . բայց աստուածափայլ աստուածապատիւ ծերունի մը, որոյ նման՝ ամենայն բարեմասնութեամբքն եւ ծայրացեալ հասական, ոչ յառաջ եւ ոչ յետոյ չերեցաւ ի Հայաստան: Սա է թոռն թոռնորդոյ սրբոյ Լուսաւորչին մերոյ, մեծ կաթողիկոսն Հայաստանեայց Ս . ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ:

Բ

Ամեն կենսագիրքն վկայեն թէ ծնած եւ մեռած է մի եւ նոյն ամսաթուի մէջ նաւասարդի 30ին . վախճանած տարին յայտնի նշանակեալ ըլլալով, եւ շաբաթուան օրն ալ (հինգշաբթի), կ'իմանամք որ այդ նաւասարդն շաբթական ամսովն է, որոյ 30նէր անշաբթ նաւասարդի 28, յամին 439, եւ 7 սեպտեմբերի . իսկ իր ծնած տարին՝ ըստ շաբթական տարւոյ նաւասարդի 30ն քսան կամ 21 օր

այլ ետք էր, որով Ս . Սահակայ ծնած օրն կ'ըլլայ սեպտեմբերի 27, համարելով թէ ծնած տարին է Քրիստոսի 352 55 թուոց մէջ: Յայսմատուրաց մէկն կ'ըսէ Սահակայ համար, Կեցեալ ամս ԾԶ (56), որ ուղղագրելով 2Զ, մեզի կ'ընծայէ կենաց տարիքը 86, եւ ծնած տարին 354 . իր աշակերտքն վկայեն թէ հասաւ «ի յերկար ծերութիւն» . սակայն անտեղի է պատմչաց ոմանց ըսածն՝ թէ 110 կամ 120 տարի ապրած ըլլայ Ս . Սահակ . վասն զի այդ թուով՝ ծնունդն կ'ելնէ յ319 կամ 329 թիւն Քրիստոսի, յաւուրս Ս . Լուսատուրչի: Բաւական է Ս . Սահակայ 86 90 տարուան կենաց՝ դեռ սովորականէ երկայն՝ շրջան մ'այլ . որ եւ երկարութենէն աւելի նշանատու եղաւ իրեն պատահած դէպքերով եւ անձինքներով, որով ոչ միայն ազգային պատմութեան այլ եւ ընդհանուր նոյնաժամանակ պատմութեան մէջ լաւ նշանելի է . ազգայնոց մէջ՝ թէ՛ քաղաքական թէ՛ եկեղեցական եւ թէ՛ ուսումնական տեսութեամբք, իսկ օտարաց առջեւ՝ աւելի եկեղեցական մերձատրութեամբն: Սահակայ երկայն կեանքն եւ երկայն կաթողիկոսութիւնն (51 տարի), սնունդն եւ զարգացումն ի Կեսարիա եւ ի Կոստանդնուպօլիս, զինքը մերձատուր եւ ծանօթ եւ շաղկապ ըրին այն մեծամեծ Անճանց՝ որք Եկեղեցոյ մէջ վիագոյն յեղանակ մը բոլորեն, անոր ամենէն գերապանծ հայրապետքն ըլլալով: Այս յեղանակս՝ «այն ատենն է, կ'ըսէ Վիլմէն, որ եկեղեցին ընկերական օրինօք այլ հիմնեալ հաստատեցաւ եւ հասարակային տէրութիւն մը դարձաւ . այն ատենն է, որ ի պերճախօսութեան եւ ի դպրութեան՝ յառաջ բերաւ այն վսեմ եւ պայծառ հանճարները, որոց ոչ երբեք նման գտուեցան հաւասարորդք՝ բայց եթէ Գաղղիոյ ԺԷ . դարու սրբազան քարոզիչքն: Ո՛րչափ մեծամեծ մարդիկ, ո՛րքան գերագոյն ճարտասանք ելան Ս . Աթանասէն մինչ ի Ս . Օգոստինոսի միջոցն . ի՛նչ հրաշագօր մտաւորական շարժումք բոլոր հռոմէական աշխարհին մէջ . ի՛նչ տաղանդներ՝ խորհրդական մրցմանց մէջ հանդիսացեալ . ինչպիսի՛ ոյժ մարդկան՝ հաւատոց վրայ բանեցուցած . ի՛նչ կերպարանափոխութիւն բովանդակ ընկերութեան, որ եղաւ ձայնիւ այն կրօնից՝ որ գետնադամբաններէն կու վերանայ ի գահոյս Կեսարոց, որ ուզածին պէս ի գործ ածէ՝ իր մարտիրոսաց արեամբ մաշեցուցած սուրբ: ... Մտաց եւ արիութեան ամենէն ամօթալի ցածութեան իջած ատենն է, երբ ներքինք կառավարէին զինքնակալութիւն, եւ բարբարոսք վրդովէին, այն ատենն է որ Աթանաս մը, Բարսեղ մը, Գր . Նազիանզացի մը, Ոսկեբերան մը, Ամբրոսիոս մը, Օգոստինոս մը՝ կու լսեցընեն ամենէն մաքուր բարոյականը եւ ամենէն գերագոյն պերճախօսութիւնը: Միայն ասոնց հանճարն կանգուն մնաց ինքնակալութեան

ընկնալու ատեն, կործանմանց եւ փլատակաց մէջ ասոնք՝ հիմնարկութիւն կ'երեւին . եւ յիրաւի, վասն զի ճարտարապետք էին այն մեր կրօնական շինուածոյն՝ որ պիտի փոխանորդէր հռոմէական ինքնակալութիւնը»։ Մեր Հայոց ազգին այլ հին թագաւորութիւնն եւ ինքնատիրութիւնն վերնալու ատեն Ս . Սահակ չէ՞ր որ գազզն եւ գեկեղեցին կանգուն պահեց՝ մինչեւ ցայժմ . (թերեւս ամէլի քան) հաւասար այդ յոյն եւ լատին սուրբ Հարց . որոց ոմանց կենաց վերջին կայծերը տեսաւ իր նորավառ աչօքն, սմանց պայծառագոյն օրերուն հասաւ, ոմանց կենակից եւ աթոռակից եղաւ, շատերուն՝ եւ նաեւ իրմէ վերջ սկսողներուն՝ շրջանին լընցընելը տեսաւ, եւ հագիւ զոմանս թողուց դեռ իրենց պայծառ աթոռին վրայ։ Ասոնցմէ ոմանց, եւ անոնց 150 ընկեր հայրապետաց Ա .

Կոստանդնուպօլսոյ եւ Բ . տիեզերական ժողովոյն, (յամին 381), հաւանօրէն ականատես եղաւ, իր կաթողիկոսութենէն ութ կամ ինն տարի առաջ, երբ թերեւս սուրբ կարգ այլ առած չէր, բայց իբրեւ որդի եւ թոռնորդի սուրբ քահանայապետաց եւ վկայից՝ ծանօթ էր ի դրան կայսերաց։

Քահանայապետութենէն առջի կեանքը, 35 տարի, ամէլի Հայաստանէ դուրս քան ներսը անցուցած կ'երեւի։ Բոլոր մեր նախնի լուսաւորչագարն հայրապետք՝ Յունաց մէջ կրթութիւն առած են, մանաւանդ Ս . Ներսէս, որ նախ ի Կեսարիա եւ յետոյ ի Կ . Պօլիս վարժեցաւ յուսմունս . եւ ըստ պատմչաց ոմանց, առաջին քաղաքին մէջ իր պատանեկութեան ատեն Վարդան Մամիկոնեան նախարարին Սանդուխտ դուստրը կին առաւ, ըստ այլոց (որ ամէլի հաւանելի է)

Կոստանդնուպօլսոյ մէջ Ասպիոն անուամբ ազնիւ (Յոյն) իշխանագին դուստրը, որ եւ յետ երեք տարւոյ վախճանելով՝ թողուց զՆերսէս այրի պատանի մը . բայց անոր հասակին եւ մեծ սրտին մխիթարանք, եւ յաւիտենական մխիթարանք մըն այլ՝ միածին որդեակ մը, զմեծն ՍԱՀԱԿ։ Թերեւս աշխարհքիս մէջ չէ եղած քան զասոնք՝ վեհագոյն հայր մը վեհագունի որդւոյ։ Աստուած՝ միայն մեր եկեղեցւոյ շնորհեց 140 տարւոյ չափ՝ Ղեւտացոց նման՝ քահանայապետական պայազատութիւն, որք վեց ազգ գիրար յաջորդեցին։

Սահակ ի Կոստանդնուպօլիս եւ ի Կեսարիա վարժեցաւ իր ցեղին եւ աշտիճանին յարմար ուսմանց . յունարէն իբր մայրենական լեզու գիտէր, եւ ուսմամբ այլ այնքան հմուտ էր անոր քերականական արուեստին՝ որ նոյն իսկ բնիկ Յունաց վարդապետներէն շատը կու գերազանցէր . ասորերէն այլ գիտէր անշուշտ չափաւորապէս . պարսկերէնն այլ՝ իբրեւ տիրող լեզու ի Հայս . իսկ իր եւ մեր

բնիկ հայերէն լեզուին՝ թագաւորն կրնայ ըստիլ, կամ առաջին հայկաբան . վկայ՝ հայերէն աստուածաշունչ գիրքն, որ իր ոսկի գրչէն եւ մեղր լեզուէն առած է իր մեծագոյն ողորկութիւնը, քան զոր քաղցր եւ կակուղ հայախօսութիւն չկայ ազգերնում մէջ . եւ թերեւս ըստ այսմ մասին՝ քան այլովքն՝ արժանապէս գերազանց դաստի քան զամենայն թարգմանութիւնս Ս . Գրոց: Իր աստուածաշնորհ հայրն՝ Մեծն Ներսէս, լաւ գիտենալով եւ թերեւս տեսնելով այլ իւր անարժան հօրը, Աթանագինէի, եւ հօրեղբօրը (Պապայ) անվայել վարքը, եւ խանգարեալ արքունեաց հրապոյրքը, չեմ տարակուսիր որ թողեր էր իր դեռաբոյս ծնունդը զգոյշ տեղ եւ զգոյշ վարժապետաց ձեռք . որոց մէջ մնալն աւելի ընտրեց Իսահակ այլ_քան հօրը ահեղ եւ տխուր մահուրնէն ետեւ՝ փութալ անոր գահը ելնել հազիւ 20 ամեայ հասական, ինչպէս Ս . Գրիգորիս իր պապուն հօրեղբայրն (15 ամեայ), կամ նոյն իսկ իր հայրն Ներսէս, որ չէր աւելի քան զ'25ամեայ նորահաս երիտասարդ մը՝ գահը ելած ատեն, եւ ոչ աւելի քան զ'35ամեայ ի գերեզման իջած ատեն:

Ս . Սահակ այլ կանուխ կարգուեցաւ, Լուսաւորչի աթոռոյն ժառանգ մը աւելցընելու համար . բայց Աստուած սահմաներ էր իրմով դադրեցընել այն յաջորդութիւնը . եւ հրաշալի երկայն տեսիլքով մը յայտնեց անոր՝ մինչ դեռ սարկաւագ էր, եւ Վաղարշապատայ մայր եկեղեցոյն (Էջմիածնի մէջ) հսկումն կ'ընէր աւագ հինգշաբթի գիշեր մը, իր ազգին եկեղեցոյն հանդիպելիքն ուխտապահ եւ ուխտագանց հաւատացելոց գործովք: Միայն դատրիկ մ'ունեցաւ Ս . Սահակ, զոր անուանեց իր անուամբն Սահականոյշ, եւ տուաւ ի կնութիւն Համագասպայ Մամիկոնէից տեառն . ի Համագասպայ ծնան երեք սահակավայել կորիւնք, Կարմիրն Վարդան, Համագասպեան եւ Հմայեակ, որոց առաջինը իրեն որդեգրեց իբրեւ հարազատ ժառանգ, բայց Վարդան այլ իր սուրբ պապուն պէս արու գաւակ չունեցաւ՝ իր Դատրիկ կնոջէն, այլ երկու աղջիկ, Վարդանոյշ եւ Շուշանիկ կոչուած, զորս զգուեց Մեծն Իսահակ իր պապական ծնգաց վրայ, եւ սեպեց իրեն պայազատ, թողլով անոնց այլ իր սեփական հայրենի ժառանգութենէն . հաւանօրէն իր թոռանց թոռունքն այլ տեսաւ Ս . Սահակ, գոնէ Ս . Շուշանկան շառաւիղքը, (որ՝ ափսո՛ւ, դժնկի մը հետ զուգեցաւ, Վազգենի Վրաց բղեշխին, սակայն այնով այլ աւելի ինքն զարմանալի եւ տօնելի եղաւ): Վարդանայ մէկայլ եղբարց ցեղն արու գաւակօք յաջորդեց ինչուան ԺԳ դար (թերեւս անկէ ետեւ այլ), եւ Ս . Սահակայ արեամբը

Պահլաւունի ըստեցաւ . արեան հետ արդիւնքն այլ ժառանգեց արժանապէս, եւ ժԱ ժԲ դարերու մէջ շատ արժանաւոր անձինք ընծայեց աշխարհի եւ եկեղեցոյ, եւ այսպէս կատարեցաւ իր տեսլեան մէջ հրեշտակին խոստումն, թէ վերջի ատենները իր ցեղէն նորէն քահանայապետներ պիտի ելնէին, եւ էին Գրիգորեանքն եւ Ներսիսեանք, յետ կիսոյ ժԱ դարու մինչեւ ի սկիզբն ժԳ . դարուն:

Գ

Ս . Սահակայ վարքն չորս նշանաւիայլ երեւոյթ կ'ընծայեն նըատմամբ իր անձին եւ ազգային պատմութեան . Ա . ուսումնական պայծառութիւն կամ հայերէն դպրութիւն, որ իր գործակցութեամբն զարգացաւ: Բ . Եկեղեցական կարդաց վայելչութիւն, որոց նոյնպէս հիմնադիր կրնայ ըստիլ, յետ Ս . Լուսաւորչին . Գ . քաղաքական տեսչութիւն, որոյ մասնակից եղաւ հաւասար իր հօրն, եւ աւելի քան զբազումս յօտար հայրապետաց . Դ . անձնական առաքինութիւնք, կամ նուիրական կեանք: Ասոնցմով կ'երեւի սուրբն Սահակ աշխարհքիս մէջ փայլած հոգւոց մէկն . խորին տեսութեամբ, հարուստ հանճարով, տաք սրտով, գործունեայ կամօք, վսեմ զգացմամբք: Այս չորս գլխաւոր գիտելեաց վրայ կ'ուզեմ դարձնել աչքդ: Հայկակ, թէ եւ համառօտ տեսութեամբ, քան պատմական դադարմամբ: Որչափ որ Ս . Սահակայ ժամանակն փառաւոր եւ պայծառ էր ըստ եկեղեցական կարգի, այնչափ այլ անշուք եւ անշնորհք մեր բնիկ աշխարհին քաղաքական վիճակն . իր երախայրութեան տարիները, նոր յաթոռ նստեր էր Տիրան թագաւոր, սկիզբն ազգերնուս կործանման, իր անքրիստոնեայ վատ եւ թոյլ վարութ . որոյ դէմն ջանալով Ս . Յուսիկ՝ պապահայր Սահակայ՝ զոհ եղաւ . Տիրանայ յաջորդն Արշակ՝ չարագոյն քան զհայրն, վեհագոյն քան զՅուսիկ քահանայապետ ունեցաւ՝ անոր թողը, զՍ . Ներսէս, որ ժրութեամբ ջանաց այնպիսի մով անձին իշխանութեան ատեն՝ թէ զաշխարհքն թէ զեկեղեցին չէն պահել . նոյնպէս անկէ այլ մով որդւոյն ատեն, Պապայ, որոյ անօրէնութեանն ինքնայլ զոհ եղաւ: Իրմէ վերջ 15 տարւոյ չափ Հայաստանի քաղաքական շփոթութեանց միջոց, Պապայ, Վարազդատայ, Արշակայ եւ Վաղարշակայ եւ Խոսրովու թագաւորութեանց ատեն՝ չորս կաթողիկոսք նստան օտար ցեղէ, ասոնց վերջնոյն ատենն Խոսրով Գ . յաջողեցաւ ազգին յերկու բաժնուած նախարարները միաբանելով՝ հանդարտեցընել զՀայաստան, եւ

յամին 389 նստուց յաթոռ մեծին Ներսիսի՝ անոր արժանաժառանգ որդին, զմեծն Իսահակ, որ այն ատեն իր հօրը վախճանած տարիքն ըլլալով եւ անոր ձրիւքն եւ շնորհօք զարդարեալ եւ յաւելեալ, կերպով մ'այլ անոր քահանայապետութիւնը նորոգեց եւ յառաջ վարեց ամբողջ կէս դար: Խոսրով քան զայս մեծ շնորհք չէր կրնար ընել իր ազգին, եւ այնքան մեծ եղաւ եւ գովելի շնորհքն, որչափ որ անով իր անձնական շահուն վնաս բերաւ, վասն զի այնպիսի կաթողիկոս մը իր աթոռոյն հեղինակութենէն զատ, թագաւորաց ազգական այլ ըլլալով՝ ազգին վրայ մեծ ազդեցութիւն պիտի ունենար, այս բանս վախ բերաւ Պարսից թագաւորին, եւ որովհետեւ Խոսրով առանց իրեն ինացընելու՝ այնպիսի նշանաւոր անձն մը Հայոց սրբազան գահուն վրայ բարձրացուցեր էր, Պարսիկն զերկուքն այլ պարտաւոր սեպեց. եւ զի Խոսրով ուրիշ ինքնագլուխ գործեր այլ կ'ընէր, եւ ինչուան անկէ գլուխ քաշելու եւ Յունաց հնազանդելու կու սպառնար, խաւրեց իր Արտաշիր որդին՝ որ զԽոսրով վերցընէ ի թագաւորութենէ, զՍ. Սահակ այլ ի հայրապետութենէ: Խոսրով խաբուելով եւ ստիպուելով՝ Արտաշիրի ձեռքն ընկաւ, եւ տեղը գրուեցաւ իր եղբայրն Վռամշապուհ (390), որ քան զեղբայրն զգուշաւոր եւ վախկոտ գտուելով՝ ինքնագլուխ բան չէր ըներ. անոր համար չհաւանեցաւ Ս. Սահակայ խնդրոյն այլ, որ դստերը (Սահականայ) աղաչանօք՝ խնդրեր էր իր փեսայն Համազասպ Մամիկոնեանք սպարապետ դնել Հայոց, փոխանակ նոր վախճանածին (Սահակայ ասպետի): Այս բանս երկրորդ պատճառ մ'եղաւ Ս. Սահակայ՝ անձամբ երթալուն առ թագաւորն Պարսից եւ միտքը շինելու: Գնաց ի Տիգրոն, տեսաւ արքայից արքայն, հաճելի եւ պատկառելի եղաւ անոր. խնդիրքները ընդունեցաւ զՀամազասպ ոչ միայն սպարապետ կարգեց, այլ եւ Հայոց նախարարաց մէջ բարձրացուց պատուով ինչուան ի հինգերորդ գահն. ուրիշ յանցաւոր սեպուած նախարարաց այլ ներումն առաւ, եւ անոնց պատուոյ կարգերը նորոգելով՝ դարձաւ առ Վռամշապուհ, եւ անոր ձեռքով այլ հաստատել տալով Հայոց Գահնամակը, իր սուրբ հօրը նման նորէն նորոգիչ եղաւ քաղաքական դասակարգութեանց. եւ եւս առաւել աշխարհիքին խաղաղութեան եւ շինութեան: Բայց քաղաքական խնամքը թողլով առ խոհեմ թագաւորն Վռամշապուհ, ինքն սկսաւ մեծ հոգով եւ ջանքով իրեն վայլածը հաստատել եւ աճեցընել, եկեղեցական բարեկարգութիւնքը, որ շատ տարիներէ վեր խանգարեր էին շատ տեղ, եւ անարժան սովորութիւնք տիրեր էին: Ուղղութեան համար բաւական գիտութիւն եւ հմտութիւն, կամք եւ ոյժ ունէր. բայց ուղղութիւնը հաստատուն եւ մնայուն ընելու համար՝ կարեւոր հնարք մ'այլ կար՝ որ կու

պակսէր իր հօրը, եւ Յուսկան եւ Լուսաւորչի անգամ . այսինքն է ազգային լեզուի դպրութիւնն, որ ի վաղուց խափանեալ էր, բնիկ հայերէն գիրն խափանուելուն համար . եւ անով՝ օտար լեզուներ (յոյն, ասորի եւ պարսիկ) սովորիլ ստիպէին թէ աշխարհականք եւ թէ եկեղեցականք, իրենց արտաքին եւ սուրբ պաշտամանց մէջ վարելու . եւ ամէնքն այլ հաւասար լեզուաց յաջողութիւն չունենալով՝ ի հարկէ կրթութեան եւ կրօնից մեծ պակասութիւն կ'ըլլար: Պէտք էր հայերէն գիր հնարել: Այս հնարքը Աստուած մեր քահանայապետին մովսիսանման գաւազանին շտուաւ, այլ իրեն ահարոնանման աջակցին, Ս . Մեսրովպայ:

Դ

Այս անձը դու լաւ կու ճանաչես, Հայկակ, որ յամենայնի լծակից եւ գործակից եղաւ մեծին Սահակայ, գրեթէ եւ կենակից . (անկէ հինգ ամիս ետեւ յաշխարհքէ ելաւ եւ անկէ այլ քիչ մը առաջ յաշխարհ եկած կ'երեւի) . նախ Ս . Ներսիսի փոքրաւոր էր, եւ անոր վսեմական մահուն ատեն ըսածները մտիկ ընելով՝ աւանդեց յետոնց . յետոյ Հայոց թագաւորին արքունիքը մտաւ քարտուղարութեամբ, լաւ թարգմանիչ եւ գրիչ ըլլալով . քանի մը տարիէն՝ արքունիքը թողուց, առանձնացաւ յաստուած խոհութիւն եւ ի ճգնութիւն . եւ հոգին ու միտքը աստուածային շնորհօք լուսաւորելով, ելաւ (յամին 396) քարոզելու եւ վարդապետելու գանազան կողմեր, առաւել ի Սիւնիս: Այս վարդապետութեան ատեն աւելի քան գաւելի ճանչցաւ ազգային գրոց եւ դրպարութեան հարկաւորութիւնը, որոյ համար եկաւ խորհրդակցելու ընդ սրբոյն Սահակայ, եւ տեսաւ որ արդէն կաթողիկոսն այլ նոյն մտածութեամբ եպիսկոպոսաց ժողովոյ մէջ է (403) բայց ուրիշ եկեղեցական հոգեր վրան առած ըլլալով՝ յանձնեց Մեսրովպայ մասնաւոր խնամքով այս բանիս ետեւէն ըլլալ . եւ ինքն անձամբ առ թագաւորն երթալով գնաւ այլ յորդորեց յայս ջանս: Բարեսէր թագաւորն այլ եթէ գանձով եւ եթէ քաղաքական ծանօթութեամբք օգնութիւն ըրաւ, մանաւանդ որ ինքն այլ պէտք ունէր լաւ քարտուղարաց, Ս . Մեսրովպայ յարքունեաց երթալէն ետեւ՝ յարմար մը չէր գտած:

Չերկնցընենք այս պատմութիւնս . Ասորի Դանիէլ եպիսկոպոսի մը քով հին հայերէն գրեր կային, անոր խաւրեց զՍ . Մեսրովպ (404), որ առաւ բերաւ ի Հայս, եւ երկու տարի աշխատելով, դպրոցաց մէջ սորվեցնելու տղայոց, ճանչցաւ որ

անբաւական են այն Դանիելեան նշանագիրքն . եւ յետ ուրիշ շատ հնարից եւ ուղեւորութեանց, ինչուան ի Սամոս երթալով՝ հոն աւելի աղօթքով եւ Աստուծոյ յայտնութեամբ՝ քան մարդկային հնարիւք՝ գտաւ եւ յարմարցուց իր եւ մեր փափագելին (յամի 406), եւ ճարտար յոյն գրչի մը ձեռօք մտցընելով ի ձեւ, (որ մետրովպեան տառք կամ երկաթագիր կ'ըստին հիմա), իբր փորձի համար ձեռք արկաւ թարգմանելու եւ գրելու հայերէն Սողոմոնի Առակաց գիրքը: Այս եղաւ սկիզբն թարգմանութեան Ս . Գրոց, հեռու եւ անծանօթ կողմոյ մը մէջ, այն տարին՝ յորում Պաղեստինոյ առանձնութեան մէջ Ս . Հերոնիմոս դադրեցուց իր գրիչը՝ սուրբ գրոց լատիներէն (վուկադա թարգմանութենէն: ... Հոս քեզի թողում ազգիդ եւ նախնեացդ արդար եւ համաշխարհական խնդութեան եւ հանդիսից մասնակից ըլլալ . կ'ուզես Ս . Մետրովպայ հետ փութա ի հայրենիքդ, իբրեւ ի Սինա լեռնէն իջնելով աստուածագին պատգամներով կ'ուզես թագաւորին եւ կաթողիկոսին եւ բոլոր մեծաց եւ փոքունց հետ անոր դիմացն ելիր, օրհնել, համբուրել եւ ընդունել այն անտես մտացդ հետ խօսող եւ լուսաւորող գծիկները . եւ մի առ մի նկատէ՛, տե՛ս դպրոցաց կանգնումը, աշակերտաց ժողովումը, փոյթ եւ ջանքն, իբրեւ երկայն ծոմաշանութենէ ետեւ պահոց պնակները կոտրող եւ գատիկ ընողք՝ յոյն եւ ասորի պնակիտները թողլով՝ հայերէն այբուբենը գրող ու սովորող մեծ ու պզտիկները . անոնց մէջէն՝ Սողոմոնի 60 զօրաւորաց պէս՝ բոլոր աշխարհքէն ջոկած 60 ամենընտիր աշակերտքը, որք իբրեւ ուշիմագոյնք, փափկաձայնք, երկարոգիք, կու դրկուին յԱղեքսանդրի, յԱթէնս, ի Կոստանդնուպօլիս, յԵդեսիա, եւ յայլ ուսմամբ անուանի քաղաքս, լաւ սովրելու յոյն եւ ասորի լեզու, եւ թարգմանելու սուրբ եւ պիտանի գրքեր:

Այս գիտս եւ յեղափոխութիւնս այսպէս երգէ հին գանձասաց մը, (Գէորգ) .

«Ո՛վ անվեհեր փութոյն պնդութեան՝ ի գիտ հանճարոյ սրբոց թարգմանչացն . խոհին ստեղծանել տառս գծագրաց, նշանակ խօսից հայկական լեզուիս . որով վաղ անցեալքն յիշատակին, եւ մեկնեալքն՝ դէմ յանդիման խօսին: Յայս հոգ զարթոցեալ սքանչելին Սահակ, զարմն վեցերորդ սրբոյն Գրիգորի . զսոյն առ նովաւ եւ զոյգ ընդ նմին աստուածաբնակ հայրն սուրբ Մետրովպ . որ եւ զըղծալի պարգես տառիցն ընկալաւ յԱստուծոյ ի մեծ գթութեանցն: Լե՛ր Քրիստոս, պահպանիչ աշակերտացս երջանիկ սրբոց թարգմանչացն, աղաչեմք»: Է ...

«Գրատրական տառից առլըրմամբ մեծապէս խընդայր տէրն սուրբ Սահակ . իսկոյն ձեռնարկէր ի թարգմանութիւն մարգարէականն աստուածախօսութեանց, ժողովեալ մանկունս ի վարժ դպրութեան, աճեցուցանէր զուսումն իմաստից, ջամբելով զկաթն նշանագրացն՝ առնէր վարդապետս եւ եւ պատմաբանողս, զի յաշորդք հարանցն վարդապետաց՝ լիցին աշակերտքն պայծառագոյնք: Լեր Քրիստոս, եւն»:

«Եւ եւս ի գորագոյն գորութիւն գնալով գրատրականին վարժից կրթութիւն, պարզ գրագիտութիւնն զարգանալով ի քերթողականն արուեստ յառաջիւր . որոց առաջին մեզ հայր քերթողաց պայծառն Մովսէս այն Խորենացին, նախնին աշակերտ սրբոյն Մեսրոպայ ի քերս բայից հզօր քան զնա . համագոր նմին՝ Յովսէփ Պաղնացի, նորուն վարժակից Եզնակ Կողբացի . Անյաղթն Դաւիթ եւ սուրբն Կորիւն, եւ միահամոռ դաս քերականացն . որք աստուածեղէն վարդապետութեամբ փարթամացուցին զՀայաստանեայս: Լե՛ր Քրիստոս, պահապանիչ աշակերտացս երջանիկ սրբոց Թարգմանչացն»:

Ե

Պարագլուխ թարգմանչաց եւ մատենագրաց ինքնին Ս . Սահակ՝ քահանայապետի արժանաւոր կարգերը հոգալով, յառաջ քան զայլս Ձեռնադրութեանց կարգը դրեց . ինչուան իր ատեն գործածուած Ս . Լուսաւորչի յունարէնէն առածը փոխելով եւ ընդարձակելով, եւ յամին 410 նաւասարդիի տօներուն, տարւոյն սկիզբը հրատարակեց զայն հանդիսապէս . զուցէ ձեռագրերով բազմութիւն եկեղեցոյ սպասաւորաց, քահանայից, եւ թերես եպիսկոպոսաց այլ: Նոյն կամ յաշորդ տարին՝ թագաւորէն եւ բոլոր եպիսկոպոսաց ուխտէն խնդրուելով՝ յանձն առաւ գլուխ կենալու Աստուածաշունչ գրոց թարգմանութեանը . եւ ընդ Ս . Մեսրոպայ՝ բոլոր եկեղեցական պաշտամանց եւ ծիսից, այսինքն Մաշտոց ըսուած գրոց, մասն մի թարգմանելով ի զանազան հարց, եւ մասն մի նոր շարադրելով, եւ մասամբ Ս . Լուսաւորչի գրուածները փոխելով ի հայ: Ընդհանուր թարգմանութեանց սկիզբն սեպտի 411 2 տարին, եւ վերջն 426 . այս 14 տարուան միջոց Մաշտոց, եւ Աստուածաշունչ գիրք հայերէն գրուեցան եւ կանոնեցան, հաւանօրէն՝ գրագրութեամբ քաջին Մովսիսի Խորենացոյ որ Ս . Մեսրոպայ քնորդին էր,



եւ Ս . Սահակայ Գրիշն: Թարգմանութեան երկրորդ տարին Ս . Սահակ յԷջմիածին ըլլալով, (ուր եւ կ'երեւի թէ այն ատեն նորոգեց Ս . Հոփսսիմեայ լուսաւորչաշէն մատուո՞ր, եւ այն հրաշագեղ կուսին տապանին վրայ դրաւ իր հայրապետական կնիքն այլ Լուսաւորչի կնքոյն քով), հոն հրատարակեց ննջեցելոց Աշխարհաթաղի կարգը . իսկ Քահանայաթաղը եւ Հոգեհանգիստը՝ զոր Ղազարիկ թարգմանիչն բերած էր՝ (Ս . Եփրեմայ շինածը ասորերէն ի հայ փոխելով եւ աւելցնելով), հրատարակեց տասն տարի ետեւ: Ուրիշ կանոններէն միայն Մէրմնօրհեաց թուականն յայտնի է, յամին 423 4 հրատարակուած . մնացեալքն այլ այս միջոցիս ոմանք ի Ս . Սահակայ եւ շատն այլ ի Ս . Մեսրոպայ կարգաւորեցան, անոր համար իր մականուամբն Մաշտոց ըսուեցաւ գիրքն, կամ թէ ինքն Մաշտոց ըսուեցաւ գրոց պատճառաւ, որ կ'ըսուի եւս Օրհնութիւնաբեր: Մեր Տօնացոյցն այլ ըստ հայ եւ հոռոմ ամսոց ինքն Ս . Սահակ նախ կարգաւորեց, եւ ինչուան հիմա գտուի իր գրածն այլ, յետոյ փոփոխածներէն գատ: Թարգմանութեանց գլուխ գործոց եղաւ նախայիշեալ Աստուածաշունչ գիրքն, որ եւ սուրբ Սահակայ անթիւ յիշատակաց եւ պարծանաց պարծանքն է հիմա մեր մէջ . զոր նախ ի Հաաստան գտուած ասորերէնէն թարգմանեց, վերջը յունարէն Եօթանասնից թարգմանութենէն սրբագրեց, կամ նորէն թարգմանեց . եւ այլ վերջը՝ Եփեսոսի ժողովէն ետեւ՝ երբ թարգմանիչք բերին աւելի ընտիր եւ ստոյգ Եօթանասնից օրինակ մը, անոր համեմատեց՝ եւ փոփոխեց առաջին թարգմանածը . եւ վերջապէս վերջին ձեռք դնելու եւ ըստ կարելւոյն կատարելագործելու համար, աշակերտներէն քաջագոյնները (յորս Մովսէս Խորենացի, Դաւիթ, Եղիշէ, եւ այլք), խաւրեց յԱղեքսանդրիա, որպէս զի տիրաբար հմտանան յոյն լեզուին, եւ ամենեւին անտարակոյս եւ հաւատարիմ ըլլայ թարգմանութիւնն . բայց աշակերտաց անյազ ուսումնասիրութիւնն եւ ընթերցմունքն զիրենք ուշացուցին Աղեքսանդրիոյ հարուստ գրատանց, եւ Ս . Կիրողի վարդապետարանին մէջ . եւ երբ դարձան ի Հայս՝ զիրենք զրկող մեծ վարդապետքն վախճանած էին:

Ս . Սահակայ հեղինակօրէն շարագրածոց մէջ՝մաշտոցի քանի մը կանոններէն գատ, գլխաւորքն են Աւագ շաբաթու շարականք (բաց ի քանի մը օրհնութիւններէ), սկսեալ ի Ղազարու յարութեան ագնի վսեմ երգոյն, «Այսօր գոլով ի Բեթանիա՝ քո ամենագօր հրամանաւդ ձայնեցեր Ղազարու, եւ դողացաւ մահ . դժոխք պարտեցաւ, ապականութիւն լուծաւ . կենդանարար Քրիստոս,

կեցո գմեզ» . մինչեւ ի վսեմախաղաղ յետին նուագն Քրիստոսի թաղման . «Որ արարիչդ ես արարածոց, հանգուցեալդ ի քերովբէս, վիմով կնքեցար յերկրի» : Այս հազասլաց խորամուխ լեզուին եւ բանից՝ յարմարցուց երաժշտական եղանակներն այլ . վասն զի այս գմայլելի արուեստին այլ քաջահմուտ էր : Ժամագրոց աղօթից այլ մէկ մասին հեղինակն է Ս . Սահակ, մընացելոց՝ իր աշակերտքն եւ յաջորդքն Գիւտ եւ Յոհան, եւ այլք յետոյ : Պատարագամատոյց մ'այլ ունի հիմակուան գործածուածէն աւելի ճոխաբան եւ ճշդարան : Ասոնք թէ՛ իր մատենագրական հանճարոյն աներկբայ հաւաստիք են, եւ թէ՛ իր եկեղեցական կարգաց եւ հոգեսիրութեան խնամոցն, որոց համար՝ (բաց յայսպիսի պաշտամանց կամ սրբազան գրոց) շատ անգամ ժողովներ ըրաւ եպիսկոպոսաց, եւ արժանաւոր քահանայապետութեան կանոններ, խրրատներ, կոնդակներ հրատարակեց . յորոց մնան հիմա վեց կամ եօթն խոհական եւ յստակախօս բանք . Ա . առ Եպիսկոպոսունս, Բ . առ Քորեպիսկոպոսունս, Գ . առ Քահանայս եւ Վանականս . Դ . վասն եկեղեցոյ եւ վանաց, եւ տրից կամ նոյրեց ժողովրդեան ի վանս . Ե . վասն տնտեսութեան եպիսկոպոսաց եկեղեցական նոյիրաց . Ջ . դարձեալ վասն նոյիրաց եկեղեցոյ, թէ որպէս բաժնելու է եկեղեցոյ սպասատրաց : Այս խրատներս Ս . Գրիգորի դրած կանոններէն առնելով ընդարձակած է, ինչպէս ինքնին կու վկայէ, եւ իր կաթողիկոսութեան առաջին տարիներն հրատարակեց յունաբէն, եւ յետ գիւտի գրոյն՝ հայերէն, անոնց հետ ուրիշ կարճ կանոններ այլ, որ յանուն Ս . Լուսաւորչին պահուին ցարդ ի կանոնագիրս մեր : Ս . Սահակայ ամենայն գրուածոց լեզուն սքանչելի յստակութիւն, մաքրութիւն եւ ողորմութիւն մ'ունի հանդերձ վսեմութեամբ, զոր իր հոգեկիր եւ արիւնաժառանգ Ս . Շնորհալիէն գատ՝ թերեւս ուրիշ մը չկրցաւ ստանալ նոյն աստիճանի :

Այս աստուածատուր եւ ամենահարկաւոր եկեղեցական եւ ուսումնական շնորհքները պատրաստելէն ետեւ, իր բոլոր ազգին եւ վիճակին մէջ ծառայելու այլ ջանաց մեծն Իսահակ . Պարսից բաժնին մէջ անաշխատ ընդունելի ըրաւ, բայց Յունաց բաժնին մէջ դժուարութիւն կրեց : Երկու տէրութեանց մէջ կոռոյ պատճառ չըլլալու համար, քիչ մ'այլ իրարատեցութեամբ՝ յունաբաժինը խորշէին ի Պարսկահայոց . մինչեւ ոչ հայերէն դպրութիւնը ընդունեցան, եւ ոչ Ս . Սահակայ օրհնութիւնը . այլ ի Կեսարիոյ արքեպիսկոպոսէն կ'առնուին ձեռագրութիւնն այլ : Ս . Սահակ փորձ մը ետեւ՝ առ ժամանակ մը լոյց .

մանաւանդ որ այն տարիներն Կոստանդնուպօլսոյ աթոռոյն յաշորդութեան մէջ
այլ շփոթութիւն կար . մինչեւ որ շատ տարիէ ետեւ (420) ստիպուելով Յունաց
բաժինը երթալ, եւ նորէն հոն իրեն արժանի պատիւ չգտնելով, թուղթ գրեց առ
կայսրն Թէոդոս Փոքր եւ առ հայրապետն Ատտիկոս, նուիրակ խաւրելով իր
փոխանորդը, զՍ . Մեսրովպ, եւ իր թոռը՝ Վարդան . կայսրն եւ հայրապետն
նախ մեղադրեցին Ս . Սահակայ՝ աւելի Պարսից եւ Ասորոց կողմ կենալը, եւ
հայերէն գրոց գիտին համար Ս . Ոսկեբերանին խորհուրդ չհարցնելն .
(չիշեցի՞ն՝ որ այն ատեն իրենք զՈսկեբերան կու հալածէին ի սառնամանիս
հիւսիսային Փոքր Ասիոյ) . վերջապէս հաւանեցան որ Ս . Սահակ հովուէ
յունաբաժին Հայերն այլ, եւ հոն այլ դպրոցներ բացուին հայերէն դպրութեան . Ս .
Մեսրովպայ այլ յունական վարդապետութեան աշտիճան եւ պատիւ տալով յետ
դարձուցին: Այսպէս զբոլոր Հայաստան աշակերտեցին Սահակ եւ Մեսրովպ . եւ
խնամքնին տարածեցին անկէ դուրս այլ իրենց դրակից եւ մասամբ թեմակից
ազգաց վրայ, Վրաց եւ Աղուանից, որոց լեզուին գրերն այլ հնարեց Ս .
Մեսրովպ, եւ սուրբ գրքերը թարգմանել տալ սկսաւ:

Յունաց բաժնին մէջ եղած ատեն՝ Ս . Սահակ իմացաւ որ հոն իր վիճակելոց մէջ
չար եւ այլանդակ աղանդ մը կայ, զոր Բորբորիտոն կ'անուանեն պատմիչք մեր,
եւ ոչ այնքան մտաց չարափառութիւն, որքան բարուց անբարութիւն կու
ցուցանեն . խստիւ ետեւէ ընկաւ այս աղտեղութիւնը վերցընելու . եւ երբ հարկ
եղաւ իրեն նորէն դառնալ ի Պարսից բաժինն (421), յանձնեց սուրբ Մեսրովպայ՝
որ անաչառ քննէ դատէ, եւ անհաւանները պատժէ, անուղղաները՝ ճակատնին
խարանով այլ նշանելով՝ հալածէ: Այս բանս թէ՛ այն աղանդին սաստիկ
աղետութիւն կու ցուցընէ եւ թէ՛ Ս . Սահակայ արիութիւնն . որ յայլսն քաղցր եւ
հեզ, զիջող եւ համբերող, ուր որ Աստուծոյ իրաւանց վրէժխնդրութիւնն յանձնած
էր իրեն՝ հոն արդար եւ անաչառ էր . զնոյն արթնութիւն ցըցուց յետոյ
նեստորականաց եւ ուրիշ աղանդաւորաց դէմ . զնոյն՝ իր կանոնական գրոց մէջ
այլ կու սպառնար . եւ զնոյն խրատ գրէր շատ տարի ետեւ առ Ս . Պրողկ՝
աշակերտ եւ աթոռաժառանգ Ոսկեբերանի, տրտմախառն յիշատակաւ իր ազգին
վիճակին, որ անտէր ըլլալով այն ատեն՝ կու դժուարացընէր կաթողիկոսութեան
տիրաբար իշխանութիւնն այլ . իսկ դուք կ'ըսէր «թագաւորս ունիք՝ որ զհոգ
Աստուծոյ յանձին բարձեալ բերեն, եւ ... կարող են ըզփուշն ի միջոյ սրբել . (վասն
այնորիկ պարտ եւ պատշաճ է ձեզ որ ի մեծամեծ իշխանութիւնդ վայելէք՝

նախանձել գնախանձն Աստուծոյ եւ ի գլուխ վարել գայնալիսի նախանձու վրիժուց հատուցմունս, եւ ոգով եւ մարմնով ջանալ՝ զի բարձցին ի միջոյ եկեղեցոյ Քրիստոսի՝ անուանարկ անօրէն ամբարշտութեան գայթակղութիւնք»։ Այս թողթս սուրբ հայրապետն մեր մահուրնէն քիչ տարի առաջ գրած է, երբ ինքն կաթողիկոսի քաղաքական կամ իշխանական տիրութենէն հրաժարած՝ միայն աստուածային տիրական իշխանութիւնը անհրաժեշտ կու վարէր, անդադար վարդապետութեամբ եւ հովուութեամբ։ Այս ցաւալի եւ սխրալի դէպքը պէտք է յիշենք։ Ս . Սահակայ քաղաքագիտութիւնը եւ քաջ ազգասիրութիւնն այլ լաւ ճանաչելու համար։

Զ

Գրեթէ գրոց թարգմանութեան սկիզբն եւ քահանայօրինէքի հրատարակման տարին (412) վախճանեցաւ բարեացապարտ թագաւորն մեր Վռամշապուի, որ Տրդատայ մահուրնէն ետեւ՝ կէս դարու մէջ եղած չլլալու չարիքն եւ շփոթքը՝ մոռացուցեր էր իր 21 տարի խաղաղ եւ խոհեմ կառավարութեամբն . իր մահն նորոգեց հին վերքերը, որք՝ աւա՛ղ, անբժշկելի մնացին։ Վռամշապուի՝ իրեն ժառանգ տասը տարեկան աղեկ մը թողուց, Արտաշէս անուամբ . աշխարհը մէկէն վերվար չլլալու համար՝ փութացաւ զգաստ հովուապետն Ս . Սահակ, (որ եւ յետ թագաւորին ազգապետ ճանաչուէր), գնաց առ Յազկերտ Ա . եւ կերպով մը իր պատճառաւ գրկուած Հայոց առաջին թագաւորին փոխարէն ընելով, խնդրեց որ նորէն թագաւորեցընէ Վռամշապուի եղբայրը, Խոսրովը, որ Անյուշ բերդին մէջ արգելուած եւ ծերացած՝ մահուրնէ զատ ազատութեան յոյս, եւ թերեւս փափագ այլ չունէր։ Ս . Սահակայ շնորհքն միայն կրցաւ Պարսից անփոփոխելի օրէնքը փոխել, եւ ինչուան ի մահ եւ ի բանտ դատապարտեալը՝ հանել ի բանտէ, եւ հաւանեցընել զնա այլ՝ նորէն իր երիտասարդ գլխին կրած թագը՝ դնելու հիմա կորացել եւ ալեւորեալ գլխին վրայ . որ եւ տարիէ մը աւելի չկրցաւ վերցընել զայն . սակայն գոնէ փառօք մեռաւ, եւ Ս . Սահակայ օրհնութեամբը իջաւ քնանալու իր ազգակից թագաւորաց հետ հասարակաց քունը։ Ս . Սահակայ փափագն կատարեցաւ անոր թագաւորութեամբն, այլ կիսակատար մնաց՝ կարճ թագաւորութեամբն . յետ որոյ քանի մը տարի պարապ մնաց աթոռն, Արտաշիսի տղայութեանն համար . եւ թէպէտ հասաւ նա յարբունս, բայց Յազկերտ իր որդին Շապուիը թագաւորեցուց Հայոց, որ եւ յետ

չորս տարի անարգանօք թագաւորութեան՝ հօրը հիւանդութիւնը լսելով փութացաւ ի Պարսկաստան անոր յաջորդելու, բայց մէկտեղ ի գերեզման մտաւ, իրեններէն սպաննուելով, եւ թագաւորեց Պարսից Վռամ Բ: Սա մէկէն Յունաց դէմ պատերազմ բացաւ (420), մեր աշխարհքն այլ նոէն ոտնակոխ եղաւ . եւ ահա այս շփոթութեանս համար էր որ Ս . Սահակ անցաւ ի բաժին Յունաց, եւ որովհետեւ Շապիոյ թագաւորութեան ատեն մեռեր էր իր փեսայն Համագասպ Մամիկոնեան՝ սպարապետն Հայոց, անոր որդին եւ իր թոռը՝ Վարդանը՝ գրկեց ընդ Ս . Մերովպայ առ կայսրն Թէոդոս, եւ ստրատելատ պատուանդամբ հօրը տեղ իշխանութեան հասուց: Անոր հետ Թէոդոս կայսր պատուէր գրկեց առ Անատոլ՝ իր արեւելից կողմնակալ գորավարն, որ յապահովութիւն յունաբաժին Հաոց ամուր քաղաք մը շինէ, եւ շինեցաւ Կարնոյ քաղաքն (422): Այսպէս Յունաց կայսրն եւ անոր իշխանութեան տակ եղած արեւմտեան Հայաստանը շահելով եւ յանձնելով ի վարդապետութիւն Ս . Մերովպայ, Ս . Սահակ ճարտար քաղաքագիտութեամբ՝ արեւելեան այլ չթողուց Պարսից թագաւորին վրէժխնդրութեանը, այլ գասպետն Սահակ եւ (յետոյ) գթոռն իւր Վարդան (երբ դարձաւ սա ի Յունաց) դրկեց ի դուռն թագաւորին՝ հաշտութիւն խնդրելու . որովհետեւ Շապիոյ երթալէն ետեւ՝ Հայք գլուխ քաշեր եւ վոնտեր էին գՊարսիկ պաշտօնեայս, ասոնց պատգամաւորութիւնը բաւական չըլլալով, (ըստ ոմանց) ինքնին Ս . Սահակ՝ երբ արեւմտեան Հայոց եկեղեցական բաները կարգի դրաւ, երկու փոքր թոռներուն հետ (Համագասպայ եւ Հմայեկայ) գնաց ի դուռն Վռամայ (422), եւ իր բնածիր եւ աստուածատուր շնորհօքն՝ ոչ միայն թափեց թագաւորին գէնքերը, այլ եւ Վռամշապիոյ որդին Արտաշէսը թագաւորեցընել տուաւ եւ բերաւ կանգնեց իր հօրը աթոռը: Երկու տէրութեանց մէջ եւ այնպիսի վտանգաւոր եւ խառնակ ժամանակ մը՝ այսպիսի խորագէտ եւ անխարդախ խաղ մը խաղալ եւ յաջորդել՝ միայն սուրբն Սահակ կարող էր: Ո՛րքան անոր երախտագէտ եւ անձնատուր պէտք էր ըլլալ Հայաստան՝ իր թագաւորան եւ իշխանօքն եւ ամենայն ուխտի եկեղեցոյն եւ ռամկաց: Լուսաւորչէ սկսեալ իր յաջորդ հայրապետքն՝ շատ հեղ այսպիսի բարիք եւ տիրութիւն ըրին իրենց որդիացեալ ազգին, բայց այն օրինեալ եւ օրինելի ազգին որդիքն՝ շատ պակաս եւ պարտական գտուեցան առ բարերարսն: Այսպէս ալ հիմա, նախ թագաւորն՝ անարժան որդի գգօն Վռամշապիոյ, Պապայ եւ Արշակայ ճամբաները երթալով՝ գգուեցուց նախարարները, արհամարհեց անոնց երեսդարձութիւնը, անսաստեց Ս . Սահակայ խրատուցը, միայն իր ծաղկեալ եւ հուժկու երիտասարդութեանը

լսելով:

Նախարարք եւ իշխանք վեց տարիէ աւելի (423 428) չկրցան համբերել անկէց իրենց եւ իրենց կանանց հասած անարգութեանը, եւ միաբանեցան մերժելու գԱրտաշէս ի ձեռն Վռամայ Պարսից թագաւորի, եւ անոր դռնէն կողմնակալ կամ հարկաժողով մը դնել տալով՝ իւրաքանչիւր իրենց տէրութիւնը եւ ազատութիւնը խաղաղութեամբ վարելու, առ այս կու յորդորէին գՄ . կաթողիկոսն այլ: Թերեւս մըտածութիւննին բոլորովին անիրաւ չէր . իրենց առջի կրածները յիշելով յանկարգ թագաւորաց, այլ դեռ շատ հեռու էր յողիղ եւ ի խոր տեսութենէ . մանաւանդ որ եղածէն աւելի սեւ կ'ուզէին ցուցնել գԱրտաշէս, եւ յիրաւի իրմէ սեւ ու աղտելի թագաւորի մը մատնել իրենց գելխ՝ բայց քրիստոնէայ թագաւորը . ինչպէս որ շատ պայծառ եւ գեղեցիկ խօսքերով բացատրեց այս բանը Ս . Սահակ, եւ երկար ջանաց հանդարտեցընելու գնախարարս: Բայց անոնց համբերութիւնն հատեր էր . եւ չուզելով ետ կենալ իրենց բռնած ճամբէն, չէին այլ կրնար ուրիշ անտելի եւ վատ գործ մըն այլ չաւելցնել . այսինքն, իրենց աշխարհական տիրոջ՝ թագաւորին հետ՝ դադարեցընել նաեւ հոգեւոր տիրոջ կաթողիկոսին իշխանութիւնն այլ . վասն զի եթէ նա չմիաբանէր հետերնին՝ խօսքերնին առաջ չէր երթար . ապա պէտք էր գնալ այլ յանցաւոր ցուցընել Պարսից թագաւորին դիմաց: Ահա հոս էր մեծագոյն փոսն, որոյ վրայէն չկրցան ցատքել, ընկան մէջը, եւ ձգեցին իրենց տեսարքը եւ բոլոր աշխարհքնին: Ելան գնացին Պարսից դուռը . Վռամ յօժարութեամբ լսեց անոնց ամբաստանութեանց եւ գրպարտութեանց . եւ քիչ մը վերջը կանչեց ի դուռն գթագաւորն եւ գկաթողիկոս . թագաւորն արդարացուց զինքը . կաթողիկոսն այլ ցուցընելով թէ թագաւորին անքրիստոնէայ գործքերը՝ իր (Սահակայ) ատենին մէջ դատելի է եւ ոչ Պարսից ատենին մէջ դատապարտելի, անոր իրաւունքը պաշտպանեց . եւ հոս այլ երեւցաւ Ս . Սահակայ մինակ մեծութիւնն՝ բոլոր բազմութեան իշխանաց պգտիկութեանը քով: Արտաշէս ներքին խղճովը, նախարարք իրենց արտաքին խղճովը, Վռամ իր անփոյթ խճղովը՝ մթնցած միգամած կորացած էին . միայն Ս . Սահակ սպիտակ եւ պայծառ սիւնացեալ ամպոյ պէս հոն կու բարձրանար: Պարսից թագաւորն առանձինն այլ յորդորելով գՄ . հայրապետն, եւ չկարենալով անոր բերնէն ամբաստանութիւն մը լսել, բաւական սեպեց նախարարաց ըսածը, եւ յանիրաւի դատապարտեց գԱրտաշէս, գրկելով յաթոռոյ եւ յազատութենէ . նոյնպէս այլ ըրաւ կաթողիկոսին . դարձեալ նախարարաց լսելով, (որք ամօթով

կ'ըսեն) ամբաստանեցին զնա իբր Յունաց կուսակից, եւ փաստ բերին անոր գրած նամակները առ կայսրն եւ առ Անատոլ, եւ զՎարդան դրկելն առ նոսա: Ս .

Սահակ այլ արգիլուեցաւ ի Պարսս, երեք չորս տարի: Հայոց թագաւորին տեղ Պարսիկ մարգպան մը դրկուեցաւ ի Հայս . իսկ այն սուրբ եւ մեծ կաթողիկոսին տեղ ո՞վ . չարալեզու երէց, չերէց մը, Արծկեցի Սուրմակն . որ ի վարձ մատնութեան այնպիսի աստուածարեալ եւ պատկառելի անձի մը, անոր աթոռը ժառանգեց: Հայոց քահանայապետ անուանուեցաւ, գոնէ կաթողիկոսի արտաքին իշխանութիւնը բանեցընելու, որովհետեւ ինքն եւ ոչ եպիսկոպոս էր: Եկաւ ի Հայս, իր սեւ երեսօք Ս . Սահակայ պայծառութեանը մէջ բիծ երեւելու համար . բայց եւ ոչ տարի մը դիմանալով՝ նոյն իսկ իր գործակից եւ բանակից նախարարներէն վռնտուեցաւ . որք եւ ուրիշ կաթողիկոս մուգեցին ի Վռամայ . նա այլ Բրքիշու կամ Բարդիստ անուամբ Ասորի մը խաւրեց, որ եկաւ տանտիկիններով լեցուց Հայոց հայրապետանոցը, զոր Ս . Սահակ իմաստուն վարդապետօք եւ թարգմանչօք եւ խարագնագգեաց ճգնաւորօք զարդարեր էր: Այն ատեն շատ լաւ իմացուեցաւ անոր արժէքը, եւ ոչ միայն աշխարհին մէջ, այլ եւ կայսեր քով եւ Եփեսոսի 200 հայրապետաց մէջ՝ հարցուեցաւ բնտոռուեցաւ Հայոց սուրբ հայրապետին վերադաս գահը . հայրասէր թարգմանիչքն մեր որ հոն գտնուեցան՝ ցուցին հեռուն Տիգրոնի բանտը: Այս անկարծելի յանդիմանութիւնս ի սիւնհոդոսի աշխարհագումար հայրապետաց, արդարեւ ծանր՝ այլ արժանի էր մեր կարճամիտ կամ կարճատես իշխանաց . որք աչքերնին աղէկ մը շփելով՝ յետ երեք տարւոյ մերժեցին զԲրքիշու այլ . եւ ոմանք լռելեայն՝ ոմանք յայտնի՝ Ս . Մեսրովպայ եւ բոլոր եկեղեցւոյ ուխտին հետ մէկտեղ՝ նորէն զՍ . Սահակ խնդրեցին յետ դարձընել . միայն ոմանք Պարսից թագաւորին կամացը թողուցին զո՞վ որ ուզէ խաւրելու . յունաբաժին Հայք այլ ուրիշ մ'ատաջարկեցին . Վռամ թէ իր ուզածը եւ թէ անոնց ուզածը միաբանելու հնարք մը սեպեց՝ Շմուէլ (Սամուէլ) անուամբ ասորի մը խաւրել փոխանակ Բրքիշոյ, կաթողիկոսի արտաքին իշխանութիւնը վարելու, եւ մարգպանին օգնական ըլլալու . Ս . Սահակն այլ արձակեց, որ Շմուէլի ընտրածները ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն, եւ հոգետրապետս հովուէ իր ժողովուրդը . եւ այսպէս յերկու բաժներով կաթողիկոսութեան իշխանութիւնը, եւ արտաքին հոգաբարձութիւնը վերցընելով ի Ս . Սահակայ, անոր վիճակեալ ռոճիկն այլ պակսեցուց . այսինքն կաթողիկոսին տրուած կալուածքներուն մեծ մասն առաւ, եւ քիչ գեղ ու ագարակ թողուց անոր . արձակելու ատենն այլ երդումն պահանջեց

ի Ս . Սահակայ՝ որ հաւատարիմ կենայ իրեն, եւ չմիտի Յունաց կողմը . ապա թէ ոչ՝ բոլոր ազգին վրայ չարիք կու հասցընէ: Այն ատեն Ս . Սահակ՝ որ կ'իմանար իր հարկատրութիւնը ազգին համար, բայց չէր այլ կրնար յանձնառու երեւիլ Վռամայ ամեն հրամայածին, իր արժէքը անգամ մ'այլ ցրցուց . եւ յոտք կանգնելով բոլոր արքունի հանդիսին մէջ, երկար ատենաբանութեամբ մէկիկ յառաջ բերաւ իր 40 տարիէ աւելի հաւատարիմ ծառայութիւն եւ երախտիքն առ դուռն եւ ի Դրանէն անվարձ եւ աներախտ մնալն, Պարսից սուտ խոստմունքը եւ խարդախութիւնը, եւ անիրաւ դատաստանները, եւ իր քրիստոնէայ հաւատոց անհրաժարելի պարտքը՝ հաւատակցաց հետ (Յունաց եւ այլոց) հաղորդութիւն ընելու: Եւ այնքան տիրաբար ճարտասանութեամբ, այլ հանդարտ եւ վսեմ կերպով խօսեցաւ այն վսեմափայլ ութսնամեայ ալեւորն, մինչեւ թագաւորն եւ իշխանքն եւ մոզերն պապանձած իրար կու նայէին, եւ չկրցաւ մէկն պատասխան տալ . այլ յետոյ ինքնին թագաւորն հրամեց իր մեծերուն, որ շատ գանձ ստակ տան մեր կաթողիկոսին, այնպէս գեղեցիկ եւ անվախ համարձակ խօսելուն համար . որոյ համբաւն յետոյ մեր աշխարհն այլ հասանելով՝ այլ աւելի սիրելի ըրաւ իր ծերունի ամենաշնորհ հայրապետը: Իսկ ինքն՝ ստակը մերժելով՝ տուողներուն աղաչեց որ անոր տեղ թագաւորէն խնդրեն՝ ինչ որ ինքն երբեմն յԱրտաշրէ խնդրեր էր . այսինքն, նախարարաց իշխանութեան գահնամակը անփոփոխ հաստատել, եւ մասնաւորապէս Արշակունեաց խնամի եղող նախարարաց կալուածքները յետ դարձնել իրենց: Վռամ հոս այլ յաղթուեցաւ յԻսահակայ, ամեն խնդրածները կատարեց, եւ անոր թողը, Ս . Վարդանը՝ հաստատեց ի պատիւ Մամիկոնէից տիրութեան եւ գօրավարութեան Հայոց: Այսպէս յետ երեք կամ չորս տարի արգելանաց դարձաւ Ս . Սահակ ի Հայս, եւ իր հին փառաւոր աթոռը Վաղարշապատը թողլով, նկատմամբ անարժան Շմուկին, բայց յանձնելով զայն ի հոգաբարձութիւն իր հոգեկցին՝ Ս . Մեսրոպայայ, ինքն ընտրեց իրեն կայանք՝ Հայոց մկրտարանը, Բագրեւանդայ Ս . Յովհաննու ուխտատեղին . եւ երբեմն այլ անոր մօտ վիճակները պտրտելով, հարազատ հովուի պէս կու խնամէր իր հեռացող եւ երբեմն մոլորեալ հօտը . եւ առաջուան պէս անխնայ քարոզէր եւ վարդապետէր:

Է

Այս ատեն մխիթարութեամբ ընդունեցաւ սուրբն Սահակ զԱղան՝ Արծրունեաց հոգեսէր իշխանն ի կրօնաւորական կեանս, ինչպէս 40 տարի առաջ այլ խնդրեր էր, բայց Ս . հայրապետն՝ Պարսից թագաւորէն ակն ածելով չէր յանձն առած այն ատեն, Ս . Սահակայ արգելանաց ատեն Եփեսոսի ժողովն կատարուեր էր (431) . որոյ վեց կանոնները եւ ոմանց ի Հարց ժողովոյն առանձին թղթերը առ Ս . Սահակ բերին ի Կոստանդնուպօլիս եղած թարգմանիչք մեր՝ Ղեւոնդ եւ Կորիւն, Եյնիկ եւ Յովսէփ, ուրիշ սուրբ հարց գործքերով, եւ գտան զՍ . Սահակ եւ զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ . զորս ընդունելով Ս . Սահակ՝ ժողովրդական ատենաբանութիւն մը ըրաւ իր հաւատարիմ եպիսկոպոսաց առջեւ, եւ հաւանութեամբ նոցա եւ Ս . Մեսրոպայ՝ պատասխան գրեց հայրապետաց . եւ սկսան նոր բերած գրքերը թարգմանել եւ սուրբ գրոց թարգմանութիւնը ուղղագրել: Բայց Եփեսոսի ժողովին վճիռը չդադրեցուց ի Յոյնս՝ Նեստորի եւ իր հետեւողաց վեճերը, այլ ամէլի գայրացաւ եւ ընդարձակուեցաւ: Ուղղափառ եւ այլափառ իրարու դէմ գրէին, եւ օտարաց խաւրէին գրածնին, յորոց շատք չկարենալով ընտրել զուղիղն եւ զծուռն՝ շփոթէին . ամէլի շփոթեցնողն էր Նեստորի վարժապետին Թէոդորի Մոպսուեստացոյ գրուածքն, որ Արիոսի եւ Մակեդոնի եւ ուրիշ հերձուածոց դէմ գրուած ըլլալով ուղղափառ կ'երեւէր, բայց երեւոյթին տակ ծածկած էր նեստորական թոյնն . սակայն ի սկզբան շատոնք իբրեւ ուղիղ ընդունեցան . ինչպէս եւ Կիւրայ եպիսկոպոսն Թէոդորետոս իմաստուն պատմիչն . որք ի Հայս այլ խաւրեց այն գրոց օրինակները, եւ որպէս երեւի՝ ոմանք ի մերոցս այլ ընկալան, եւ բարեկամն Թէոդորետեայ՝ մեր Եւլալ եպիսկոպոսն Մարդաղոյ (զոր յետոյ յիշէ Եղիշէ ի ժողովի Արտաշատու) թարգմանեց զայն գրեանքն ի հայ: Այս բանիս կասկածելով նախ Ս . Սահակայ մերձաւոր աթոռակիցքն Ակակ Մելտենոյ եպիսկոպոսն, եւ երանելին Բաբուլաս՝ Եդեսիոյ եպիսկոպոսն, գրով իմաց տուին առ ծերունի հայրապետն մեր (յամի 434 5), որ եւ մէկէն քննել տուաւ ու գտաւ . եւ Թէոդորոսի գրուածոց հետ՝ Բաբուլայի եւ Ակակայ նամակն այլ խաւրեց առ ծանօթն իւր Ս . Պրոկլ Կոստանդնուպօլսոյ հայրապետն, ձեռամբ Ղեւոնդի երիցոյ եւ Աբբայ կամ Աբելի, որպէս զի նա երկու կողմէն գրուածներն այլ քննէ եւ իր դատաստանը իմացընէ: Պրոկլ ուրախութեամբ ընդունելով Ս . Սահակայ դրկած նուիրակութիւնը, եւ անոր ծայրագարդ հասակին, եւ թերեւս հին ծանօթութեան եւ դիպուածոց համեմատ, ինքն որ դեռ նոր նստեր էր յաթոռ (434) գործելով եւ պատկառանք, իբրեւ իր վարդապետին (Ոսկեբերանի) ընկերակիցը տեսնելով՝ կու գրէր այս նշանական

խօսքերով սկսելով . «Երանի՛ որ հանապազորդ լինիցին ի քաղցրահայեաց տեսիլ աստուածագեղ երեսացդ, եւ զի՞ ասեմ հանապագ, այլ գոնեայ յաւուրս կամ յամիսս կամ ի տարեկանս: Ասացէ եւ իմ անձն: Ո՞ր առնէր զիս արժանի հասանել անկանել յոտս արեւարանիչս...: Եւ ուստի՞ ինձ այդ լինիցի, բայց եթէ յաղօթից սրբոյդ, զոր մեծ պատարագաւ միշտ ի վերայ արժանաց եւ անարժանաց՝ ամենասուրբն Աստուծոյ հաստուցանես»: Իսկ խնդրոյն վրայօք երկայն բացատրութիւն մը գրեց . բայց նախ քան գրկելն ի Հայս, խաւրեց առ անուանին Յովհաննէս Անտիոքայ հայրապետն, որ ինքն այլ իր հաւանութիւնը եւ ստորագրութիւնը տայ, նա այլ իր եպիսկոպոսաց ժողովով ստորագրեց եւ գովութեամբ դարձուց . նուիրակն տարաւ թողթը նաեւ առ մեծն Կիւրեղ Աղեքսանդրի հայրապետն . նա այլ հաւանեցաւ եւ առանձինն այլ գրեց թէ առ Ս . Պրոկլ եւ թէ առ Ս . Սահակ ընդդէմ Թեոդորի Մոպսուեստացոյ . այսպէս Պրոկլ երկու պատրիարքաց վկայութեամբ այլ հաստատելով գրածը՝ անկէ ետեւ գրկեց ի Հայս՝ (436), բայց իր նուիրակն Բասիլ՝ իր կողմանէ այլ բաներ անելցուց ընդդէմ Թեոդորի, իր հայրապետին գրածը բաւական չհամարելով: Այս թղթոյն այլ միաբան պատասխան գրեց Ս . Սահակ ընդ Մաշտոցի, եւ ապահովցուց որ Թեոդորի սերմունքը չկան Հայոց մէջ . «Եւ որ Դիողորեայ (Դեոդորեայ (Թեոդորի) Մամուեստացոց աշակերտեալք իցեն, առ ժամանակս՝ ի շնորհացն Աստուծոյ՝ այնպիսի ինչ չեւ է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան, ի հարկէ ջան լիցի մեզ խլել զխաչն եւ զգայթակղութիւնն զայն ի միջոյ ի բաց կորուսանել . զի միաբանութիւն՝ որպէս ի ձերում միջի փառաբանի, եւ զմեզ ի նմին հաւասարութեան փառաւորութիւն առ Աստուած հաստուցանել արժանի արասցէ»: Այս թողթսդրած է Ս . Սահակ հագիւ երկու կամ երեք տարի յառաջ քան իր մահը . այն միջոցին հանդիպեցաւ եւ մահ Շմուէլի, որ ազահութեամբն անելի քան զԲրքիչոյ զգուելի եղած էր ամենուն, բաց ի Սուրմակայ, Հաւատարիմ նախարարք եւ եպիսկոպոսունք ազատելով այն անուանեալ քաղաքացի ասորի կաթողիկոսէն, Ս . Սահակայ ոտքն ընկան, եւ լալով ներումն խնդրէին եւ օրերով կ'աղաչէին որ իր հօրը Ս . Ներսիսին պէս անյիշաշարութեամբ յանձն առնու նորէն իրեն կատարեալ կաթողիկոսութիւնը . բայց ամենայն ջանք եւ աղաչանք անօգուտ եղան . Ս . Սահակ ոչ յիշաշարութեամբ մերժեց, այլ արդէն լաւագոյն հանդերձեալ կենաց պատրաստութեան մէջ ըլլալով այն ծանրացեալ հասակի, միանգամայն եւ հին տեսիլքն միշտ աչացն առջեւ ըլլալով, յիսուն վաթսուն տարի զայն լռութեամբ

պահելէն ետեւ, պատմեց իրեն աղաշողաց, թէ՛ իր ցեղէն քահանայապետութեանը դադրիլն եւ թէ իր եկեղեցոյն հանդերձեալ հալածանքը եւ վտանգը: Ջոր լսելով ամենքն զարհուրեցան, ապշեցան, ափ ի բերան եղան, եւ ականայ իրաւունք տուին այն մեծ սրտակտուր անձին՝ որ կ'ըսէր . «Երթայք յինէն ի բաց, եւ թոյլ տուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց . զոր տեսանեմ աչօք մտացս՝ ի գօրութենէ վերին ցուցակութեան . մի բռնադատէք մխիթարել զիս ի վերայ բեկման ժողովրդեան իմոյ»: Ելան կորակոր, ի բաց գնացին լուռնուռ, եւ անկէ ետեւ ոչ որ համարձակեցաւ այն խնդրոյն վրայ բան մը խօսիլ՝ այն վսեմ ցառով կնքուած սրտին հետ . որուն բռնի հնչած հառաչանքն այլ՝ հիմա շատ ազդու կու գար նախարարաց ակընջին, քան անկէ տասն տարի առաջ երկայն յորդորանքն՝ զիրենք կրկին տիրամատնութենէ յետ կեցընելու համար: Իր լուսաւորչական գահը իշխանական փառօք դառնալէն աւելի՝ մխիթարութիւն եղաւ իրեն կենաց վերջընթեր տարին՝ (438), իր մեծ աթոռակցին: Ս . Ոսկեբերանի մարմնոյն դարձն ի Կոստանդնուպօլիս, որուն մահը, արքայանքը, եւ եպիսկոպոս նստիլն տեսեր էր Ս . Սահակ իր կաթողիկոսական աթոռէն: Իսկ հիմա այն աթոռոյն աստիճանաց վրայ նստած՝ եւ նկատելով ի գերեզմանն, «յայնմհետէ ամփոփեալ զինքն յամենայն աշխարհածուփ գբօսանաց, աղօթից միայն պարապէր եւ վարդապետութեան»:

Ը

Հոս պէտք է յիշել Ս . Սահակայ վարուց սրբագոյն նրբագոյն կերպարանքն այլ, աստուածային համակամութիւնն, կամ ներքին կենակցութիւնն ընդ Աստուծոյ . յորում այնքան գերագանց էր քան իր սուրբ նախնիքն անգամ, մինչեւ անաշատ պատմիչն համարձակ վկայէ թէ, «Սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ, աղօթիցն մասամբ առաւելեաց: Քանզի ստացաւ աշակերտս 60, արք կրօնաւորք, խարագնագգեստք, երկաթապատք, բոկագնացք, որ յար ընդ նմա շրջէին . որովք՝ մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր գկանոնն, որպէս զայն՝ որ յանապատսն են . եւ հոգայր զաշխարհս, որպէս զայն՝ որ յաշխարհի են»: Այս երկու անձնան հարկաւոր հոգերը բոլոր կենացը մէջ այնպէս մէջ այնպէս միացուցեր էր Ս . Սահակ, որ երկու անձ կարծուէր մի եւ նոյն կերպարանօք, մէկն յաշխարհի եւ յարքունիս՝ զընկերս եւ զազգ հոգալով, միսն յանապատի եւ յառանձնութեան՝ իր հոգին եւ զԱստուած մտածելով: Այսպէս կ'ընէր

կաթողիկոսութենէն առաջ, այսպէս կաթողիկոսութեան ատեն, եւ այսպէս իր կենաց վերջերն այլ . եւ թէ եւ հիմա բոլորովին առանձնանալ փափագէր, այլ «Բագունք յեպիսկոպոսաց եւ յայլոց պատուական քահանայից՝ ոչ երբէք ժուժէին տեւել եւ մեկուսանալ ի մշտաբոլիս աղբերէ վարդապետութեան սրբոյն, ուր ուրեք եւ դիպէր, ի յոստանի եւ կամ ի հովս»:

Յետին անգամ ի հով ելեր էր յամարան 439 տարւոյ, երբ յետ մահուն Վռամայ՝ անոր յաջորդ որդւոյն՝ Յագկերտի՝ զօրքն եկան ի Բագուան, ինչպէս տեսանք ի սկզբան պատմութեանս . եւ ահա այս անժամ ու անպատշաճ շփոթութենէն պէտք էր հեռացնել այն ի մահ եւ յանմահութիւն հասունացեալ հայրապետը, որ արդէն յետին հիւանդութեամբ մօտ էր իջնելու յանկողնէն ի գերեզման: Հայրասէր հաւատարիմ ձեռասունքն՝ աւելի գրկօք քան պատգարակօք՝ վերուցին ժամանակին հայրապետաց նահապետը, եւ Լուսաւորչի յետին պայազատը . տարին քանի մը ժամ հեռու՝ Ալաշկերտի Բլուր կամ Բլրոցաց ըսուած գիւղը . որ ապահով եւ ճամբէ հեռու տեղ մ'էր, (գոր դժբաղդութեամբ եւ շատ փնտռել եւ չեմ տեսած): Հոն հիւանդութիւնն ծանրանալով, իմաց տրուեցաւ ծանօթիցը . հաւանօրէն պատերազմի պատճառաւ սուրբ Վարդան հեռացեր էր, բայց իր կինն Դստրիկ՝ եւ մէկ այլ եղբարքն եւ մերձաւորք՝ եկան իրենց պապուն եւ ամենայն Հայոց հօրն քով . իր համանուն համահոգի Իսահակ նահապետին նման՝ կոթնելով մահուան բարձին, աշխարհական եւ հոգեկան կտակներն ըրաւ . բաժնեց անոնց իրմէ կողոպտուած ստացուածոց մնացորդը . բայց առատապէս տուաւ իր անկողոպտելի ստացուածքը, այսինքն «ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց գնոսա օրհնութեամբ բազմաւ . եւ պատուիրեաց նոցա պահել զվարդապետութիւն պատուիրանի սրբոյն Գրիգորի, զոց ուսոյց եւ աւանդեաց ճշմարտութեամբ ամենայն աշխարհիս Հայոց»: Ջնոյն պատուէր եւ օրհնութիւն տալով իր հաւատարիմ ձեռնասուն հոգեսուն աշակերտացն, ապա բոլորովինամփոփեց զինքն յինքեան . եւ թերեւս իբրեւ յետին բարով մնաս ըսելով աշխարհիս՝ անցուց անգամ մ'այլ մտքէն ընդարձակ նկարի մը պէս՝ իննսնամեայ կենաց բազմակերպ տեսարանները փոփոխութիւնները, քսանէն աւելի թագաւորաց յաջորդութիւնները՝ զոր տեսեր էր երեք տէրութեանց մէջ, Հայոց, Յունաց եւ Պարսից, որոց շատին հետ տեսութիւն եւ գրոյց այլ ունեցեր էր . իր աշխարհին կերպ կերպ եւ շատը ողբալի դիպուածները: (Տիրանայ կուրութենէն ինչուան Արտաշիսի աքսորը) . եւս առաւել եկեղեցւոյն անցքը, իր մեծ պապուն՝

Յուսկան՝ բրածեծ մահուորնէն մինչեւ ի մահ իր անարժան աթոռակցին՝ Շըմուէլի . ուսկից փոխելով յիշատակը՝ անցուց առջեւէն երկայն սուրը չար մը իր հովուակից հայրապետաց՝ գորս դար եւ կէս ժամանակ սնուցեր եւ իրեն ծանուցեր էր . եւ որոց ետեւէն ահա կ'երթար ինքն այլ, յետ շատերէն երկար՝ (կէս դար հովուութեան եւ բազմաթիւ վաստակաց եւ վշտաց) առ հովուապետն եւ վարձահատոյցն ամենեցուն, Քրիստոս . որոյ յանձնելով զագգն եւ զեկեղեցին, զերախտաւորս եւ զապերախտս, եւ ապա իր ի մանկութենէ առ նա փափագած եւ կարօտած հոգին, փոխեցաւ «խաղաղական հանգրստի» ի կենաց աշխարհիս՝ ի կեանս արքայութեան երկնից, յետոյ սեպտեմբերի 439 տարւոյն, յօր հինգշաբթի, յերկրորդ կամ յերրորդ ժամուն «Ի պաշտաման անուշահոտ իողոյն» . մեծն ան անձն . «Որ մահկանացու ծնեալ, անմահ գիրն յիշատակ եթող . պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն . եւ այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութեան իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, եւ ոչ յախտից առննդունել»։ ...

Հանգի՛ստ, ո՛վ Մեծ, քու սրբասնեալ մարմնոյդ յերկրի, եւ փա՛ռք պայծառ հոգւոյդ՝ յերկինս։ Բայց ի՞նչ ըսենք քու հաւատարմացդ, քու անմխիթար սրբոցդ, քու կարօտեալ աշակերտացդ, որք յետ երկար ժամանակաց եւ աշխարհէ աշխարհ պանդըխտութեանց՝ կու դիմէին յԱղեքսանդրիոյ եւ ի Բիզանդիոյ, յԱթենայ եւ ի Հռովմայ՝ քու եւ քու հոգեկիցդ (Մեսրովպայ) ամենընկալ հայրագործով գրկացդ, յուսալով հարսանեաց պարովք եւ առագաստի երգովք դիմաց ելնել, եւ ութ կամ տասն տարուան մտաւոր աշխատանաց պտուղն ընծայել։ Իսկ հիմա՞, «Ու՛ր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս, եւ ահաւորութիւն՝ առ թիւրս, ու՛ր գուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացըն հանդիպումն, ու՛ր խնդամիտ սիրտն՝ ընդունող արբանեկաց, ու՛ր երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցող։ Կորեալ ժողովօղն, թռեալ նաւահանգիստն, ելիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ»։ Այս խօսքերս եթէ նախ Խորենացոյ մը գրչէն լսած ես, Հայկակ, գիտցիր որ կրքերն՝ շատերուն են, իմս այլ են, որ այն ատեն եւ անկէ ետեւ եղածներն այլ նկատելով, աւելի անոր նման «Հառաչումն յիս ի ներքո ընթանայ եւ արտօսը, եւ կամեցուցանէ բարբառել բան տխրական եւ սգաւոր», քան թէ փափագ գայ Ս . Սահակայ վրայ «հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ արժանի սուրբ հօրն դրուատից»։

Մակայն դարձեալ նոյն անուասիրտ աշակերտին եւ պատմիչին հետ «այլում տեղոյ եւ ժամանակի զայսոսիկ թողցուք» եւ երթանք մեք այլ հեռուէն՝ ընկերելու այն լուրջ յողարկաւորաց հետ, որոց աշխարհական պարագլուխն է մեծին Վարդանայ կինն, սեւասքողեալ սիբիլայի պէս, իսկ եկեղեցականաց՝ Երեմիա երէցն, սարկաւագապետ Սրբոյն, հանդերձ բազմութեամբ աշակերտացն եւ խարագնագգեաց միաբանից, քահանայից, ազատ եւ ռամիկ մարդկան աշխարհախումբ հանդիսի, որք լեռնէ լեռ ձորէ ձոր անցնելով, եւ Արածանոյ հառաչածայն կարկաշանաց քարավազ ճամբան բռնելով՝ կ'իջնեն ի Տարօն գաւառ, եւ կու դադրին անոր հիւսիսակողմը պարսպող լեռանց ստորոտը՝ սարատափի մը վրայ, ուր է հանգուցելոյն սեփական կալուածն, եւ բուն հին գոհից տեղն՝ Յաշտիշատ գեղն . հոն այն աստուածանման հոգւոյն անարատ պահարանը՝ պարկեշտ մարմինը՝ կ'ամփոփեն պատուական տապանի մէջ, որոյ վրայ յետոյ կու շինեն այնպիսոյն արժանաւոր Եկեղեցի մեծապայծառ եւ վկայարան սրբոյն, պատուական եւ մեծագին սպասուք» . անոր այլ բոլորտիքը «հիմնացուցեալ կանգնեցին ի տեղոջն վանս բազմութեան պաշտօնէիցն, կարգեալ դարմանս անպակաս պտղոց ի հանգիստ առաւելեալ եղբայրութեանն» . ուր ժողովեցան իր ճգնագգեցիկ աշակերտներէն ոմանք . ոմանք այլ ուրիշ տեղեր ցրուած վանքեր հաստատեցին: Իսկ հաւատարիմ երախտագէտ սիրելիք սրբոյն՝ Աշտիաշատայ եկեղեցին եւ վանքն այլ բաւական չսեպելով, «Ժողովս տարեւորականս աշխարհայորդոր բազմութեամբ հաստատեցին ի տեղոջն, որ ըստ ժամանակի՝ բազմամբոյս ժողովրդոք՝ կանաւոր յօժարութեամբ ազատք եւ քահանայք գաւառին, այլ եւ կարի յոյժ հեռաւոր տեղեաց դիմեալք յօր կարգադրութեան նորա տօնեն, որ եւ բազում օգնութիւնս առողջութեան ըստ իւրաքանչիւր ախտից շահին ի նշխարաց սրբոյն, եւ ուրախալից սրտիւ դառնան»:

Երջանիկ հայրապետ եւ յայսմ մասին, որ Վարդանայ պէս թոռն ունեցաւ, եւ Մամիկոնէից նման բարեպաշտ եւ տաքսիրտ ազգականներ, որք կրցան ուրիշ նախարարաց ապերախտութեան փոխարէն՝ մեծագործ սուրբ յիշատակարան մը հոյակապ տաճար մը կանգնել, իրենց նահապետին նշխարաց վրայ . այնքան արժանապէս մեծ ու փառահեղ էր այս տաճարս, որ երբ լման 200 տարի ետեւ (639) մոլէնախանձ Հագարացիք առաջին անգամ մատն ի Հայաստան, հասարակ եկեղեցեաց խնայելով՝ ամենէն աչքի զարնողները փլուցին, որոց մէջ

չորս հատն յանուանէ յիշատակի, եւ առաջինն է սա: Յայտնի է որ յետոյ դարձեալ շինեցաւ վայելչապէս, բայց զայն այլ քակեց, կ'ըսեն, գաղտնասիրտն Լէնկթիմուր, եւ անոր քարերով Արածանոյ Սուլուխ գիւղին քով կամուրջ կապեց, բայց մինչեւ հիմա կու տեսնուին աւերակք հին եկեղեցոյն, նշանք մամիկոնեան մեծագործութեան, որոց մէջ փոքրիկ, պարզ, ու կէս գետնաթաղ չէն մտաւոր մը՝ 14 դարէ վեր կու ծածկէ զգերեզման մեծին Սահակայ: Անոր դիմաց գրուած է պատշաճապէս՝ իր յետին հոգեկիր եւ արենակիր շառաւիղն, շուշանագեղ եւ Շուշան անուն թոռնեայն, Վարդենի՝ դուստրն Վարդանայ մեծի: Անոնց տօնին՝ յիշատակին մինչեւ ցայսօր յուխտ երթան խոնարհ տեղացիք, կարծես թէ եւ Քուրդք անգամ, փոխանակ փոխանակ այնքան հեռաւոր եւ մերձաւոր ազգայնոց, որոց պարտ եւ պատշաճ էր ոչ միայն նորէն կանգնել վայելուչ եկեղեցին, այլ եթէ աւելի առատութիւն եւ ազատամտութիւն բանեցընէին, բլրաշափ բուրգ մ'այլ բարձրացնել ի յիշատակ աննման հայրապետին մերոյ եւ ամենայն հայրապետաց արժանաւոր օրինակին, փափագելի էր այն բրգան չորս երեսաց վրայ կռել գրել իրանշան քանդակներով՝ իր վարուց չորս սքանչելի կերպարանքը, առաջնոյն վրայ գրել **ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՅՑ**, դրուագելով երկու անգամ իր ազգի թագաւոր կանգնելը, եւ երկու անգամ անոր ազնուականութեան գահնամակը նորոգելը, մէկ մը՝ Պարսից դուռը, մէկ մը նախարարաց ժողովին մէջ իրաւաբանելն, եւ այլն . երկրորդ երեսին վրայ գրել **ՈՒՍՈՒՄՆԱՏՈՒՐ ԲԱՆԱՍԷՐ**, եւ շարել իր շարականները, թարգմանութիւնները, նախադասելով աստուածաշունչը, Ս . Մեսրոպայայ ձեռք տալը, դպրոցաց բացումը ընդ բոլոր Հայաստան, Վրաստան, Աղուանստան, եւ թարգմանչաց առաքումը յԱսորիս, յԵգիպտոս, ի Յունաստան եւ յԻտալիա . երրորդին վրայ գրել **ԵԿԵՂԵՑԱԶԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏ**, եւ դրուագել իր գումարած ժողովքները, դրած կանոնները, գրած եւ հաստատած եկեղեցական գրքերը, Հայրապետաց հետ թղթակցութիւնը, հերձուածները հալածելը . չորրորդին վրայ գրել **ԵՐԿՆԱԿԵՆՑԱՂ ՍՐԲԱՍՈՒՆ**, նշանակելով իր նուիրական, ճգնագդեցիկ կեանքը, եւ կենաց յետին ժամը: Իսկ քառակուսի բրգան ծայրն ալ քիչ մը տաշելով՝ անկել ի գագաթը երկնասլաց սպիտակ սրտածեւ սափոր մը ոսկի բոցով եւ ոսկի գծով նշանուած, զոր փափաքէի Հայկակ, որ՝ թէ ոչ այնքան մեծ, գոնէ այնքան մեծ, գոնէ այնքան փայլուն ըլլար՝ մինչեւ ուր որ ըլլայինք՝ կարենայինք տեսնել զայն եւ կարդալ հոն ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ: